

ԱՆԻԻ ԱԲԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ա

Ըլլայ լացի, համբոյրի,
 Յիշատակի, մըտածման,
 Մըռնչելու համար ըլլայ, օ՛ն, մըտնենք.
 Մըտնենք հըսկայ քաղաքն հըսկայ ածիւնի,
 Մըտնենք Շիրիմն հայութեան...
 Ողջո՛յն, Անի, գերեզմնոց,
 Ուր կը փըտին ոսկորներն յաղթ Անցեալին.
 Ողջո՛յն, Անի, օրօրան,
 Ուր փլուզի տակ, կարիճի սեւ արիւնով
 Մեր Ապագան կը մեծնայ.
 Ողջո՛յն, Մեռե՛լ, Մա՛յր, ողջո՛յն.
 Ահա կու գամ, ես վերջին
 Նորաբողբոջ գըլուխը հայ Յիդրային,
 Կու գամ կեանքիդ փառքովը մա՛հդ օրօրել.
 Ըսել, թէ մեծ եղար դու,
 Կամ մեծ խոստումը մեծութեան, դու եղար
 Լուսակայլակ պողպատ ըստինք մ'որուն դեմ,
 Խուժդուժ ցեղեր ծըծելու դեռ անվարժ՝
 Եկան Նօթի լընդերն իրենց ջախջախել.
 Ծեր Ասիոյ շեմին վրայ դու եղար
 Երեք դարու սիրտն՝ եթէ Յոյնն ըղեղն էր,
 Սիրտ կենսաբուխ՝ որուն աչքերն յառած պիշ՝
 Նենգ Բիւզանդիոնն, այդ բոզորդին Յըռմի
 Զեզ կը դաւեր լափլիզելու ախորժով:
 Եւ ան դաւեց եւ ան յաղթեց. ու աւա՛ղ,
 Երբ դրօշակն իր ցըցուած տըխմար արքայիդ
 Յովհաննէսի շիրմին վրայ՝